ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ

զեկույց

Գյումրի
2022

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ

զեկույց

Գյումրի
2022

Ուսումնասիրության հեղինակներ՝	Բելլա Պետրոսյան, Ռիմա Սարգսյան, Քրիստինա Քոչարյան, ՇՊՀ Հասարակական գիտությունների ֆակուլտետի ուսանողուհիներ
Պրակտիկայի ղեկավար՝	Արթուր Նաջարյան, ՇՊՀ Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի դասախոս
Ուսումնասիրության խորհրդատու՝	Աննա Եղոյան, երիտասարդության հարցերի փորձագետ
Խմբագիր՝	Կարեն Տերտերյան, երիտասարդության հարցերի փորձագետ
Ձևավորող՝	Լալա Ղազարյան, ԵՆԿ ՀԿ հանրային կապերի պատասխանատու

«Շիրակի մարզում երիտասարդների ոչ ֆորմալ կրթության կարիքների վերհանում» զեկույցը մշակվել է 2022 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» (ԵՆԿ) ՀԿ-ի և «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Հասարակական գիտություններ ֆակուլտետի սոցիոլոգիա բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհիներ՝ Բելլա Պետրոսյանի, Ռիմա Սարգսյանի և Քրիստինա Քոչարյանի կողմից ԵՆԿ ՀԿ-ում պրակտիկայի շրջանակում:

Ուսումնասիրությունը միտված է Շիրակի մարզում երիտասարդների ոչ ֆորմալ կրթության կարիքների վերհանմանը, ինչպես նաև դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների մշակմանը:

Զեկույցը ներկայացնում է հետազոտության նպատակն ու խնդիրները, մեթոդաբանությունը, արդյունքների վերլուծությունը, հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները:

Աշխատանքը նախատեսված է բուհերի, պետական և ՏԻՄ լիազոր մարմինների, միջազգային գործընկերների, երիտասարդության հարցերով հետաքրքրված կազմակերպությունների, փորձագետների, ուսուցանողների և երիտասարդության լայն շրջանակի համար:

Ցանկացած ձևով սույն զեկույցի ամբողջական վերարտադրումը, վերամշակումը կամ թարգմանությունը կարող է իրականացվել միայն ԵՆԿ ՀԿ-ի գրավոր համաձայնությամբ: Զեկույցի որևէ հատվածի վերարտադրումը թույլատրելի է միայն շահույթ չհետապնդող, ոչ առևտրային նպատակներով՝ սույն սկզբնաղբյուրին պատշաճ հղման պայմանով:

Սույն զեկույցը հնարավոր է ներբեռնել www.yic.am կայքից:

Զեկույցի էլեկտրոնային հրատարակություն, 2022 թ.
«Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ
Շիրակի պետական համալսարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ 4

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 4

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 5

Կրթության շարունակականությունը և ոչ ֆորմալ կրթության ճանաչելիությունը 5

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ 6

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 12

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ 13

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 14

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 15

Երիտասարդների հետ հարցազրույցի հարցաշար 15

Երիտասարդների հետ խմբային քննարկման ուղեցույց 16

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

Հետազոտության նպատակն է՝ վերհանել Շիրակի մարզի երիտասարդների կարիքները ոչ ֆորմալ կրթության ոլորտում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Բացահայտել, թե որոնք են բուհական կրթության բացերը ըստ երիտասարդների, և արդյոք ոչ ֆորմալ կրթությունը լրացնում է ֆորմալ կրթության այդ բացերը:
2. Բացահայտել երիտասարդների հետաքրքրությունները ոչ ֆորմալ կրթության հնարավորությունների վերաբերյալ:
3. Պարզել երիտասարդների նախընտրած դասընթացների թեմաները և ձևաչափերը:
4. Ներկայացնել հիմնախնդիրների լուծման առաջարկություններ՝ նպաստելով Շիրակի մարզում երիտասարդների ոչ ֆորմալ կրթության բարելավմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակին և խնդիրներին հասնելու համար կիրառվել են որակական և քանակական մեթոդներ.

Հարցումներ

Հետազոտության ընթացքում կիրառվել է քանակական հարցման մեթոդաբանությունը հարցաթերթերի միջոցով: Հարցումն իրականացվել է Շիրակի մարզի (Գյումրի, Արթիկ, Մարալիկ, Փոքր Սարիար և այլ բնակավայրերի) երիտասարդների շրջանում, դրանց մասնակցել է 120 երիտասարդ:

Խմբային քննարկում

Խմբային քննարկում է իրականացվել ՇՊՀ-ի ուսանողների հետ: Իրականացվել է մեկ խմբային քննարկում 8 մասնակցի հետ առկա ձևաչափով:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության շարունակականությունը և ոչ ֆորմալ կրթության ճանաչելիությունը

Արագ փոփոխվող աշխարհում, որտեղ անընդհատ ծնվում են նոր գիտելիքներ և նորարարական գաղափարներ, կիրառության մեջ են մտնում նորագույն տեխնոլոգիաներ, այդ ամենին տիրապետելու և մրցունակ լինելու համար անհրաժեշտություն է դառնում շարունակական կրթությունը, որի ապահովման հիմնական ձևերից է նաև ոչ ֆորմալ կրթությունը: Ոչ ֆորմալ կրթությունը թույլ է տալիս սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչներին, հատկապես երիտասարդներին ձեռք բերել և զարգացնել շարունակ փոփոխվող միջավայրի պահանջներին և պայմաններին համապատասխան հմտություններ, կարողություններ և գիտելիքներ: Պետությունը կարևորում է ոչ ֆորմալ կրթության նշանակությունը, չափանիշների մշակման և ներդրման կարևորությունը և աջակցում է համապատասխան ծրագրերի և նախաձեռնությունների իրականացմանը:[1] Այստեղ էական դեր են խաղում հասարակական կազմակերպությունները, որոնք առավելապես ներգրավված են համայնքային և երիտասարդական կրթական ծրագրերի իրականացման աշխատանքներում: Ֆորմալ կրթության համեմատ, ոչ ֆորմալ կրթություն մատուցողներն ավելի անհատականացված ուսուցման տարածք են կարողանում ապահովել, հաճախ նաև հասնելով նրանց, որոնց ֆորմալ համակարգի մանկավարժները չեն կարողանում հասնել: Սա ներառում է մարգինալացված և խոցելի խմբերի երիտասարդներին, ովքեր փոփոխվող աշխատաշուկայում մրցակցությունից հետ մնալու ամենամեծ վտանգի տակ են: Ոչ ֆորմալ կրթություն մատուցողները, հետևաբար, կարող են կարևոր դեր խաղալ ապագայի հնարավորությունների անհավասարությունը նվազեցնելու, ինչպես նաև ֆորմալ կրթություն մատուցողների հետ գիտելիքների և լավագույն փորձի փոխանակման գործում:[2]

Հավելենք, որ Հայաստանում ոչ ֆորմալ կրթության տարածումը սկսվել է 20-րդ դարի 90-ական թվականներից:[3] Սակայն կան նաև բավական լուրջ բացեր, օրինակ, չնայած, ոչ ֆորմալ կրթությանն առնչվող ՀՀ կառավարության համապատասխան որոշում ու ԿԳ նախարարի հրաման կա, բայց գործնականում, մինչ օրս, ոչ ֆորմալ ուսուցման արդյունքների ճանաչման համակարգը լիարժեք չի գործում:

[1] ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 25-ի նիստի N 54 արձանագրային որոշում, https://escs.am/files/files/2019-08-30/e92e607a253f41e850a77275c261b0ab.pdf [01.12.2022]:

[2] “The future of work”, Policy Paper, Council of Members // Extraordinary General Assembly Amiens, France 22-23 November 2019, https://erit.am/documents/pdf/744af5ea037cc3c099a5a3888074aa98.pdf [01.12.2022]:

[3] ՀՀ-ում ոչ ֆորմալ կրթության հայեցակարգին հավանություն տալու մասին հայեցակարգ, ՀՀ կառավարության 2006 թ. դեկտեմբերի 14-ի նիստի N 50 արձանագրային որոշում, https://www.irtek.am/views/act.aspx?aid=37587 [01.12.2022]:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ

Այս հետազոտության շրջանակներում հիմք է ընդունվել «ոչ ֆորմալ» կրթության հետևյալ սահմանումը:

> «Ոչ ֆորմալ կրթություն (ուսուցում)՝ կրթության լրացուցիչ ուսուցման ծրագիր կամ ծրագրերի ամբողջություն, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաստատությունների) կամ այդ գործառույթն իրականացնելու իրավասությունն ունեցող կազմակերպության և (կամ) ծառայության միջոցով, սակայն չի հանգեցնում որակավորման աստիճանի շնորհման և ուսումնառության արդյունքների պաշտոնական ճանաչման, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի»:[4]

Սույն ուսումնասիրության համար իրականացված հարցմանը մասնակցել է 120՝ 16-30 տարեկան երիտասարդ, որից 81,2%-ը աղջիկներ են, իսկ 18,8%-ը՝ տղաներ: ՁբաղվածությունԸ երիտասարդության կյանքի փուլի կարևորագույն արդիական սոցիալական ինստիտուտն է: Ձբաղվածության գործոնն էականորեն ազդում է սեփական «ես»-ի, ինչպես նաև հասարակական ենթահամակարգերի ընկալման վրա՝ պայմանավորելով երիտասարդների կողմից իրենց հետագա կյանքի պլանավորումը: Մասնակիցները աշակերտներ են կամ ուսանողներ, ովքեր ունեցել են միջին մասնագիտական կամ անավարտ բարձրագույն կրթություն:





Գծապատկեր 1. Հարցման մասնակիցների սեռատարիքային կազմը

Ինչպես երևում է Գծապատկեր 1-ից, 16-20 տարեկան երիտասարդների մոտ նկատվում է ոչ ֆորմալ կրթության նկատմամբ հետաքրքրություն, իսկ 26-30 տարեկան երիտասարդները հետազոտության անցկացման պահին հետաքրքրություն չցուցաբերեցին:

[4] ՀՀ օրենքը կրթության մասին, Հոդված 3-ի 1.4-րդ կետ, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166466 [01.12.2022]

Ըստ հետազոտությանը մասնակցած երիտասարդների՝ բուհական կրթության բացերը և երիտասարդներին չբավարարող խնդիրները հետևյալն են՝



Գծապատկեր 2. Ըստ Ձեզ որո՞նք են բուհական կրթության բացերը (ի՞նչը Ձեզ չի բավականացնում)

Ինչպես տեսնում ենք գծապատկերից, երիտասարդների մի մասը կարծում է, որ բացեր չեն նկատվում բուհական կրթության մեջ: Սակայն, շատերի կողմից նշված հիմնական խնդիրները վերաբերում են գործնական աշխատանքների, մասնագիտական դասընթացների քիչ կազմակերպմանը, վարձավճարների բարձր լինելուն, պրակտիկ ուսուցման պակասին, հեռավար դասընթացներին, ոչ լիարժեք կրթությունը և այլն:



Գծապատկեր 3. Ըստ Ձեզ, ոչ ֆորմալ կրթությունը լրացնո՞ւմ է ֆորմալ կրթության բացերը (n=120)

Ինչպես տեսնում ենք, հետազոտության մասնակցած երիտասարդների մեծ մասը (46%-ը՝ միանշանակ, իսկ 13%-ը՝ մասամբ) կարծում է, որ ոչ ֆորմալ կրթությունը լրացնում է ֆորմալ կրթության բացերը, սակայն, հակառակ կարծիքը ևս ցածր ցուցանիշ չի գրանցել:

Ձեկույցի նպատակներից էր նաև պարզել երիտասարդների հետաքրքրությունները և դասընթացների մասնակցելու հաճախականությունը հետազոտությունը անցկացնելու ժամանակ: Երիտասարդները հիմնականում հետաքրքրված են մասնագիտական դասընթացներով և ցանկանում են մասնակցել՝ դատական, բժշկական, իրավաբանական, սպորտային և այլ դասընթացների, օտար լեզուների, համակարգչային գիտելիքների զարգացման դասընթացների (Excel, Word), ինչպես նաև ծրագրավորման, մարքետինգային, տեղեկատվական տեխնոլոգիաների, գրաֆիկ դիզայնի, սեռական դաստիարակության, հիգենիայի դասընթացների: Դասընթացներին չմասնակցելու պատճառը ազատ ժամանակ չունենալն է, կամ դասընթացների նկատմամբ անհետաքրքրությունը: Երիտասարդները հետաքրքրված են այն դասընթացներով, որոնք նպաստում է անձի «Ես»-ի բացահայտմանը, և սեփական միջավայրի ավելի ճիշտ ընկալմանը:



Գծապատկեր 4. Փափուկ հմտությունների զարգացման ինչպիսի՞ դասընթացների կցանկանայք մասնակցել (%) (n=120)

Ինչպես երևում է գծապատկերից, երիտասարդները ցանկանում են խորացնել հիմնականում հաղորդակցման հմտությունը, բանակցելու հմտությունը, կոնֆլիկտների կառավարման հմտությունը: Սակայն, քիչ տոկոս չեն կազմում նաև մյուս հմտությունները՝ որոշումներ կայացնելու, քննադատական մտածողության, խմբագրելու կարողության, ստեղծագործական մտածողության, տրամաբանության և մասնագիտական կողմորոշման:

Ինչպես փաստում է ուսումնասիրությունը, երիտասարդների մեծ մասը համակարգչային գիտելիքների զարգացման ոլորտում ցանկանում է Word ծրագրի մասին նաև գիտելիքներ ձեռք բերել, իսկ մի քանիսը նշել էին այլ ծրագրեր, որոնցից են WPS Office, SPSS, Toon Boom Harmony, Design, Photoshop-ը: Հավասար տոկոսային ցուցանիշ է գրանցվել Excel և Power Point ծրագրերի դեպքում:



Գծապատկեր 5. Համակարգչային գիտելիքների զարգացման ինչպիսի՞ դասընթացների կցանկանայք մասնակցել (%) (n=120)



Գծապատկեր 6. Լեզուների ուսուցման ինչպիսի՞ դասընթացների կցանկանայիք մասնակցել (%) (n=120)

Ինչպես տեսնում ենք, շատերը ցանկանում են անգլերեն լեզուն խորացել, բայց ելնելով պատասխանների արդյունքներից բավականին շատ լեզուներ են նշվել, որոնցից են՝ թուրքերենը, չինարենը, իտալերենը, կորերենը, պարսկերենը և հնդկերենը:

«Տրամաբանության, բանակցելու և հաղորդակցման հմտությունն է ամենակարևորը, համակարգչային գիտելիքներից հիմնականում նախընտրում ենք այն, որը կապված է մեր մասնագիտության հետ: Լեզուներից կարևորում ենք անգլերենը և ֆրանսերենը»:

«Շատ կցանկանայի մասնակցել Excel-ի ու մարքեթինգային դասընթացների»:

Երիտասարդների հետ խմբային քննարկումից

«Այս պահին հետաքրքրությունները տարբեր են, մասնագիտականից բացի, ունեմ այլ հետաքրքրություններ: Հետաքրքրված եմ աստղագիտությամբ, մաթեմատիկայով, ֆրանսերենով, բայց ժամանակի սղության պատճառով չեմ հասցնում մասնակցել բոլոր դասընթացներին»:

Երիտասարդների հետ խմբային քննարկումից

Ըստ հետազոտության, երիտասարդների 78,9%-ը նախընտրած դասընթացների համար պատրաստ է նաև վճարել, իսկ 21,1%-ը պատրաստ չէ:



Գծապատկեր 7. Ձեր նախընտրած դասընթացի համար պատրա՞ստ եք վճարել (%) (n=120)

Նախընտրած դասընթացների համար երիտասարդների 12,5%-ը պատրաստ է վճարել 5.000-10.000 դրամ, երիտասարդների շուրջ 13,5%-ը պատրաստ է վճարել 10.000-20.000 դրամ, իսկ երիտասարդների շուրջ 4%-ը՝ 20.000-30.000 դրամ: Կայն երիտասարդներ, ովքեր նշել էին նախընտրելի դասընթացը և գումարը, օրինակ ծրագրավորման դասընթաց, որի համար պատրաստ է վճարել 80.000 դրամ: Երիտասարդների շուրջ 7%-ը նշել է, որ պատրաստ է վճարել այնքան, որքան պետք կլինի դասընթացի համար, իսկ երիտասարդների 2,5%-ը կվճարի այնքան, որքան հարմար կլինի իր գրպանին:

«Նախընտրած դասընթացների համար, իհարկե, պատրաստ ենք վճարել՝ 5.000-20.000 դրամ»:

Երիտասարդների հետ խմբային քննարկումից

Երիտասարդները, որոնք պատրաստ չեն վճարելու իրենց նախընտրելի դասընթացի համար, նշել են հետևյալ պատճառները՝

1. Չունեն բավարար ֆինանսական միջոցներ:
2. Չունեն սեփական եկամուտ:
3. Նախընտրում են մասնակցել անվճար դասընթացների:
4. Վախենում են գումարն անտեղի վատնել ու չստանալ սպասելի արդյունք:
5. Երիտասարդները տիրապետում են ինքնուսուցման արվեստին:

Ինչպես տեսնում ենք հաջորդող գծապատկերից, երիտասարդները նախընտրում են, որ դասընթացի տևողությունը լինի 1-2 ամիս (45%) կամ 6 ամիս (39,4%), այդ ժամանակահատվածը համարելով ավելի արդյունավետ, իսկ 12,8%-ը նախընտրում են մեկ անգամյա դասընթացներ: Երիտասարդների 4,5%-ը, չնայած երկարությանը, նախընտրում է 1 տարի տևողությամբ դասընթացներ: Երիտասարդները դասընթացներին նախընտրում են տրամադրել հիմնականում 1-2 ժամ:



Գծապատկեր 8. Որքա՞ն ժամանակ կարող եք տրամադրել դասընթացին (%) (n=120)

«Նախընտրում ենք 6 ամիս տևողությամբ դասընթացների մասնակցել, շաբաթական 3 անգամ՝ 3-4 ժամ, կարծում ենք այս տարբերակը ավելի լավ է»:

Երիտասարդների հետ խմբային քննարկումից

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա՝ կարող ենք կատարել հետևյալ **եզրահանգումները՝**

- Գյումրու երիտասարդների բուհական կրթության բացերը կապված են գործնական աշխատանքների, մասնագիտական դասընթացների քիչ կազմակերպման, պրակտիկ ուսուցման պակասի, հեռավար դասընթացների ժամանակ առաջ եկած խնդիրների (ուսանողների ու դասախոսների տեխնիկական գիտելիքների պակաս, տեխնիկայի ու ինտերնետ կապի հասանելիություն և այլն) հետ: Ըստ երիտասարդների՝ ոչ ֆորմալ կրթությունը ավելի շուտ լրացնում է ֆորմալ կրթության բացերը:
- Գյումրու երիտասարդներն ունեն հետաքրքրություն և ցանկություն մասնակցելու ոչ ֆորմալ կրթության տարբեր դասընթացների՝ լեզուների (հիմնականում՝ ռոմանոգերմանական), փափուկ հմտությունների (հաղորդակցման, բանակցելու, քննադատական մտածողության), ինչպես նաև համակարգչային գիտելիքների (Word, Ecxel) զարգացման: Երիտասարդների մոտ դիտվում է դասընթացների մասին տեղեկացվածության պակաս: Երիտասարդների հետաքրքրությունների մեջ գերակշռում են մասնագիտական դասընթացները կամ մարքեթինգը:
- Գյումրու երիտասարդներն ունեն նախընտրելի դասընթացների թեմաներ, որոնք՝ կապված մասնագիտությունների և հետաքրքրությունների հետ, խիստ տարբերվում են միմյանցից: Հիմնականում նախընտրել են արդիական թեմաներ՝ մարքեթինգ, ծրագրավորում, գրաֆիկ դիզայն և այլն, հետագայում աշխատանք ունենալու հետ կապված: Երիտասարդները ցանկանում են, որ դասընթացը լինի 6 ամիս տևողությամբ, շաբաթական 3 օր, 1-2 ժամ՝ այս ժամանակահատվածը համարելով ավելի արդյունավետ:
- Գյումրու երիտասարդները հիմնականում պատրաստ են որոշ գումար տրամադրել իրենց նախընտրած դասընթացների համար, բայց ավելի շատ նախընտրում են անվճար դասընթացները՝ սեփական ֆինանս չունենալու պատճառով, իսկ այն երիտասարդները, ովքեր աշխատում են պատրաստ են վճարել:

Հիմք ընդունելով հետազոտության հիմնական եզրահանգումները՝ կարող ենք ներկայացնել հետևյալ **առաջարկները՝**

- Ստեղծել վիրտուալ հարթակ, որը նախատեսված կլինի դասընթացների համար, որտեղ բոլոր հասարակական կազմակերպությունները կարող են տեղեկատվություն տրամադրել դասընթացների վերաբերյալ (դասընթացի թեմա, անցկացման վայր, տևողություն և այլն):
- Հասարակական կազմակերպությունները՝ բուհերի հետ համագործակցելով, իրականացնեն մասնագիտական պրակտիկ դասընթացներ՝ կիրառելով ոչ ֆորմալ կրթության մոտեցումները:

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Գծապատկեր 1. Հարցման մասնակիցների սեռատարիքային կազմը 6

Գծապատկեր 2. Ըստ Ձեզ որո՞նք են բուհական կրթության բացերը (ի՞նչը Ձեզ չի բավականացնում) 7

Գծապատկեր 3. Ըստ Ձեզ, ոչ ֆորմալ կրթությունը լրացնո՞ւմ է ֆորմալ կրթության բացերը 7

Գծապատկեր 4. Ոչ ֆորմալ ուսուցման սկզբունքներով և մեթոդաբանությամբ անցկացվող ինչպիսի՞ դասընթացների կցանկանայիք մասնակցել (փափուկ հմտությունների զարգացում) 8

Գծապատկեր 5. Համակարգչային գիտելիքների զարգացման ինչպիսի՞ դասընթացների կցանկանայիք մասնակցել 9

Գծապատկեր 6. Լեզուների ուսուցման ինչպիսի՞ դասընթացների կցանկանայիք մասնակցել 9

Գծապատկեր 7. Ձեր նախընտրած դասընթացի համար պատրա՞ստ եք վճարել 10

Գծապատկեր 8. Որքա՞ն ժամանակ կարող եք տրամադրել դասընթացին 11

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ օրենքը կրթության մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166466

2. ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 25-ի նիստի N 54 արձանագրային որոշում, https://escs.am/files/files/2019-08-30/e92e607a253f41e850a77275c261b0ab.pdf

3. ՀՀ-ում ոչ ֆորմալ կրթության հայեցակարգին հավանություն տալու մասին հայեցակարգ, ՀՀ կառավարության 2006 թ. դեկտեմբերի 14-ի նիստի N 50 արձանագրային որոշում, https://www.irtek.am/views/act.aspx?aid=37587

4. Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը հաստատելու մասին, ՀՀ կառավարության 2015 թ. սեպտեմբերի 10-ի N 1062-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=100589

5. Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման ենթակա մասնագիտությունների ցանկը հաստատելու մասին, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թ. փետրվարի 5-ի N 83-Ն հրաման, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=104160

6. Հայաստանի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Կրթության ազգային դասակարգիչ» հաստատելու մասին, ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2021 թ. հունիսի 2-ի N 353-Ն հրաման, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153514

7. Ոչ ֆորմալ կրթության ներածություն. Ձեռնարկ ուսուցանողների համար, Թադևոսյան Ա, Լավչյան Շ, Մինասյան Ա, Երևան, 2012 թ., https://erit.am/documents/pdf/af7a17e4ae19d750da65bc1737715a69.pdf

8. Երիտասարդական աշխատանքի ոլորտում ուսուցողական արդյունքների վավերացման և ճանաչման վերաբերյալ իրականացված սոցիոլոգիական հետազոտության վերլուծություն, ԿԱՁԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, 2019 թ., http://kasa.am/wp-content/uploads/2021/04/Report-Kasa-armenian.pdf

9. ԵԿՀ-ԱՄԿ կարիերայի զարգացման աջակցման ազգային համակարգի զեկույց, 2022, https://erit.am/documents/pdf/b7627941428496cfa89ac8d814701400.pdf

10. The future of work, Policy Paper, Council of Members // Extraordinary General Assembly Amiens, France 22-23 November 2019, https://erit.am/documents/pdf/744af5ea037cc3c099a5a3888074aa98.pdf

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Երիտասարդների հետ հարցազրույցի հարցաշար

- Երիտասարդների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների ուսումնասիրություն՝ սեռ, տարիք, կրթություն, զբաղվածություն, բնակավայր:
- Ըստ Ձեզ, որո՞նք են բուհական կրթության բացերը (ի՞նչը Ձեզ չի բավարարում):
- Ըստ Ձեզ, արդյո՞ք ոչ ֆորմալ կրթությունը լրացնում է ֆորմալ կրթության բացերը (մանրամասնել):
- Ոչ ֆորմալ ուսուցման սկզբունքներով և մեթոդաբանությամբ անցկացվող ինչպիսի՞ դասընթացների կցանկանայք մասնակցել.

  ա) Փափուկ հմտությունների զարգացման՝

  - Հաղորդակցման հմտություն
  - Որոշումների կայացման հմտություն
  - Բանակցելու հմտություն
  - Կոնֆլիկտների կառավարման հմտություն
  - Քննադատական մտածողության
  - Խմբագրելու կարողության
  - Ստեղծագործական մտածողության
  - Տրամաբանության
  - Մասնագիտական կողմնորոշման
  - Այլ ___

  բ) Համակարգչային գիտելիքների զարգացման՝

  - Word
  - Excel
  - Power Point
  - Այլ ___

  գ) Լեզուների ուսուցման՝

  - Անգլերեն
  - Գերմաներեն
  - Իսպաներեն
  - Ֆրանսերեն
  - Այլ ___
- Վերը նշվածից զատ ի՞նչ այլ դասընթացի կցանկանայք մասնակցել:
- Ձեր նախընտրած դասընթացների համար պատրա՞ստ եք վճարել:

1) այո, 2) ոչ

ա) եթե այո, ապա որքան՝ ___

բ) եթե ոչ, ապա ինչու՝ ___

- Որքա՞ն ժամանակ կարող եք տրամադրել դասընթացին:
- Դասընթացի տևողությունը լինի՝
  - Մեկ անգամյա
  - 1-2 ամիս
  - 6 ամիս
  - Այլ ___
- Խնդրում ենք ներկայացնել Ձեր հետաքրքրություններն այս պահի դրությամբ: Ի՞նչ հաճախականությամբ եք մասնակցում դասընթացներին: Հիմնականում ո՞ր դասընթացներին եք նախընտրում մասնակցել: Եթե չեք մասնակցում, ապա ինչո՞ւ (խնդրում ենք մանրամասնել):

Շնորհակալություն հայտնել մասնակցության համար:

Երիտասարդների հետ խմբային քննարկման ուղեցույց

- Երիտասարդների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների ուսումնասիրություն՝ սեռ, տարիք, կրթություն, զբաղվածություն, բնակավայր:
- Ըստ Ձեզ, որո՞նք են բուհական կրթության բացերը (ի՞նչը Ձեզ չի բավարարում): Արդյո՞ք ոչ ֆորմալ կրթությունը լրացնում է ֆորմալ կրթության բացերը (մանրամասնել):
- Ոչ ֆորմալ ուսուցման սկզբունքներով և մեթոդաբանությամբ անցկացվող ինչպիսի՞ դասընթացների կցանկանայք մասնակցել ա) Փափուկ հմտությունների զարգացում, բ) Համակարգչային գիտելիքների զարգացում, գ) Լեզուների ուսուցում:
- Վերը նշվածից զատ ի՞նչ այլ դասընթացի կցանկանայք մասնակցել: Ձեր նախընտրած դասընթացների համար պատրա՞ստ եք վճարել (եթե այո, ապա որքա՞ն, եթե ոչ, ապա ինչո՞ւ):
- Որքա՞ն ժամանակ կարող եք տրամադրել դասընթացին (նշել ամիս, ժամ և այլ):
- Խնդրում ենք ներկայացնել Ձեր հետաքրքրություններն այս պահի դրությամբ: Ի՞նչ հաճախականությամբ եք մասնակցում դասընթացներին: Հիմնականում ո՞ր դասընթացներին եք նախընտրում մասնակցել: Եթե չեք մասնակցում, ապա ինչո՞ւ (խնդրում ենք մանրամասնել):

Շնորհակալություն հայտնել հարցազրույցի համար: